ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ-Ի ԵՎ ԳԴՀ-Ի ՄԻՋԵՎ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՎԱԾՔԸ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ

Կրթությունը և մշակույթը յուրաքանչյուր երկրի բնակչության գիտական և գաղափարական զարգացման կարևորագույն ասպարեզներ են, ինչքան հաջող է նրանց դրվածքը, այնքան բարձր է բնակչության գիտակցական մակարդակը, մանավանդ, երբ տվյալ երկիրը չբավարարվելով իր հնարավորություններով ու ձեռքբերումներով, դրանց հավելում է մյուս երկրների նվաճումները: Հայաստանը 1991թ. անկախանալուց հետո զգալիորեն բարելավել է իր հարաբերությունները եվրոպական երկրների, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Չինաստանի և այլ պետությունների հետ, արդյունքում զգալիորեն շահել է քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում:

Դրա դասական օրինակը հայերի և գերմանացիների սերտ փոխհարաբերություններն են, հատկապես կրթության և մշակույթի գործընթացներում:

Ինչպես կտեսնենք, դրանցում ձեռք բերված անժխտելի հաջողությունները ՀՀ-ի և ԳԴՀ-ի դիվանագետների, քաղաքագետների, տնտեսագետների, բազմաթիվ մտավորականների, կրթամշակութային բնագավառների աշխատողների գործունեության արդյունքն են:

Դեռևս 1995թ. դեկտեմբերի 21-ին ստորագրվել է մշակութային համագործակցության միջկառավարական համաձայնագիր: Այդ ժամանակվանից էլ սկսվել է երկկողմանի սերտ համագործակցությունը: Նշված համաձայնագրի հիման վրա ստեղծվել է «հայ-գերմանական համատեղ հանձնաժողով», որի առաջին նիստը հրավիրվել է 1996թ. սեպտեմբերին, ուր որոշում է կայացվել մշակութային համագործակցություն իրականացնել Սաքսոնիա-Անհալտ երկրամասի հետ: 1997թ. օգոստոսի 20-27-ը Հայաստանում էր ԳԴՀ Սաքսոնիա-Անհալտ երկրամասի Մշակույթի նախարարության պատվիրակությունը, որի նպատակն էր հայ-գերմանական մշակութային համագործակցության շրջանակներում նախատեսված կոնկրետ ոլորտներին վերաբերող քննարկումների անցկացումը: Նրանք օգոստոսի 21-ին ներկա գտնվեցին գերմանական գրադարանի պաշտոնական բացմանը՝ Խնկո-Ապոր անունը կրող մանկական գրադարանում: Օգոստոսի 21-26-ին Մշակույթի և ԿԳ նախարարություններում տեղի ունեցան Հայաստան-Սաքսոնիա-Անհալտ համագործակցության բնագավառների վերաբերյալ խորհրդակցություններ և աշխատանքային քննարկում-

ներ: Երկուստեք քննարկվեց նախապես փոխհամաձայնեցված ծրագիր չորս հարցի ներառումով: Առաջին հարցը վերաբերում էր «Գերմանալեզու գրականությունը հայերեն թարգմանությամբ» լույս ընծայվելիք մատենաշարի առաջին գրքի խնդրին, կողմերը համաձայնվեցին, որ մատենաշարի առաջին հատորի Շտեֆան Գեորգեի բանաստեղծությունների հրատարակման և տպագրության ծախսերն իր վրա է վերցնում Սաքսոնիա-Անհալտ երկրամասի կառավարությունը, որի առնչությամբ երկկողմ պայմանագիր ստորագրվեց:

Երկրորդ հարցը՝ 1998թ. ԳԴՀ-ում Հայաստանի օրերի նախապատրաստման աշխատաքներին էր վերաբերում: Հայկական կողմը պարտավորվեց տասնօրյա ժամկետում ԳԴՀ ԱԳՆ-ին ներկայացնել մշակութային օրերի անցկացման վերջնական հաստատված ծրագիրը 1998թ. գարնանը, նախատեսված միջոցառումները պայմանավորվեցին անցկացնել նույն տարվա սեպտեմբերին:

Երրորդ հարցը՝ Վիտտենբերգ քաղաքում գործող «Լոյկորեա» հիմնադրամին կից հայագիտական ուսումնասիրությունների և հայ մշակույթի կենտրոնի ստեղծմանը: Չորրորդ հարցը՝ հուշարձանների պահպանման և հնագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և փոխանակման խնդիրներին: Պայմանավորվել են այդ ուղղությամբ գործնական աշխատանքներ սկսել հաջորդ տարվանից[1]:

1998թ. Հայաստանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի և Կրթության ու գիտության նախարարությունների ու ԳԴՀ Սաքսոնիա-Անհալտ երկրամասի Մշակույթի նախարարության միջև ստորագրվել է «Գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում հետագա համագործակցության մասին» հուշագիր[2]: Գերմանական կողմը հենց այդ հանդիպման ժամանակ տեղեկացրեց, որ կրթաթոշակների տրամադրումը շարունակվելու է: Գերմանական կողմը «Համատեղ հուշագրի» II.5 կետի համաձայն ներկայացրել է գերմանական 4 դպրոցների թեկնածություն, որի նպատակն է միջդպրոցական գործընկերություն ծավալել Յ. Լեփսիուսի անվան N88 դպրոցի հետ: Այդ գործընկերության առաջին քայլը համակարգչային կապի հաստատումն էր երկու դպրոցների միջև: Գերմանական կողմը ծրագրի իրականացման նպատակով խնդրել է մանրամասն տեղեկություններ հայտնել դպրոցի մասին, կարևորելով ուսուցիչների ու աշակերտների թիվը, մասնագիտական թեքումը, հնարավորությունները տեխնիկական ոլորտում:

Ուշադրության է արժանի Գերմանիայի հետաքրքրվածությունը Հայաստանի Հանրապետության սպորտի բազմակողմանի ուսումնասիրման և մասսայականացման նկատմամբ: Գերմանական կենտրոնական հեռուստատեսության

---

[1] ՀՀ ԱԳՆ, Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 19, թերթ 16-17:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 22 հունիսի, 2004թ.:

ARD ծրագրի պատվերով SW3 հեռուստատեսային ալիքի օժանդակությամբ և գերմանական ERRA-REISEN տուրիստական ընկերության ֆինանսավորմամբ և դեսպանության անմիջական մասնակցությամբ, որը նախապատրաստական աշխատանքով աջակցում է դրա իրականացմանը, 1998թ. հուլիսի 16-30-ը Սաար երկրամասի ռադիո-հեռուստատեսային թիմը նկարահանումներ է կատարել Հայաստանում: Նկարահանվել է տուրիստական վայրերի վերաբերյալ 50 րոպե տևողությամբ տեսահոլովակ-ֆիլմ, որի պրեմիերան տեղի ունեցավ գերմանական հեռուստատեսության SWR ծրագրով: Այն հեռաստրվում է նաև Ավստրիայում և Շվեյցարիայում[3]:

Ժողովուրդների փոխըմբռնման ոլորտում հույժ կարևոր են փոխայցելությունները և դրանց զուգահեռ անցկացվող զբոսաշրջիկային միջոցառումները: Դրա վառ արտահայտությունն է ITB-98 միջազգային զբոսաշրջիկական ցուցահանդեսը, որին ակտիվ մասնակցություն է ունեցել հայկական պատվիրակությունը: 1998թ. մարտին Բեռլինում կայացավ զբոսաշրջիկության նախարարների միջազգային համաժողով, որի թեման էր «Զբոսաշրջիկության քաղաքականության մշակում հաջորդ տասնամյակում»: Համաժողովում հարկ եղավ անդրադառնալ նաև «Կառավարության դերը զբոսաշրջիկության քաղաքականության ապագա կողմնորոշման մեջ» թեմայում արծարծվող մի քանի հարցերի: Բեռլինում տեղի ունեցած զբոսաշրջիկության միջազգային համաժողովին համընթաց, այնտեղ նույն ժամանակաընթացքում, կայացավ ITB-98, միջազգային զբոսաշրջիկության ցուցահանդես: ՀՀ-ը նշված ցուցահանդեսին ներկայացրել են «Արմինտուր», «Այաքս», «Էլիտար» և «Եվրոստան-Ույուտ» զբոսաշրջիկային ֆիրմաները, որոնց հովանավորել է ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարությունը: Գոհացնող այն է, որ Հայաստանի ստենդը արժանացավ բոլոր մասնագետների, ինչպես նաև ցուցահանդեսի մասնակից երկրների թղթակիցների, ներկայացուցիչների և այցելուների ուշադրությանը: Հայաստանը, քանի որ առաջին անգամն է մասնակցում նման միջազգային ցուցահանդեսին, հատուկ հայկական ստենդ այցելեցին Գերմանիայի էկոնոմիկայի գծով պետքարտուղարի տեղակալը և Բեռլինի քաղաքապետը: Հայաստանը ոչ միայն առաջին անգամն էր մասնակցում նման խոշոր զբոսաշրջիկության ցուցահանդեսին, այլև առաջին անգամ ընդգրկվեց Բեռլինյան միջազգային տուրիստական տոնավաճառների կատալոգի մեջ[4]:

1998թ. սեպտեմբերին Հալլե-Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «LEUKOREA» հիմնադրամին կից ստեղծվել է «Մեսրոպ» հայագիտական հաստատությունների կենտրոն[5]: Այն ապահովում է Հայաս-

---

[3] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 178, թերթ 47:
[4] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 197, թերթ 22-23:
[5] Armenisch-Deutsche Korrespondenz (ADK), Nr. 119/120 Jg. 2003/ Heft 1&2, s. 20.

տանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդական հարցերի և սպորտի, Կրթության և գիտության նախարարությունների և Գերմանիայի Սաքսոնիա-Անհալտ երկրամասի Մշակույթի գործերի նախարարության միջև ստորագրված համատեղ հայտարարության մեջ ձեռք բերված պարտավորությունների կենսագործումը: Վերոհիշյալ համալսարանի պրոֆեսոր Հերման Գոլցը կենտրոնի ղեկավարն է, իսկ համալսարանի գիտական քարտուղարն է Վազրիկ Բազիլը:

Կենտրոնի պաշտոնական բացումը կատարվել է Գերմանիայում Հայաստանի մշակույթի օրերի ընթացքում: Ներկայումս «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ որոշակի աշխատանք է տարվում ուղղված Աշտարակ և Վիտտենբերգ քաղաքների համագործակցության կազմակերպմանը:

Սերտ համագործակցությունն առանձնապես ակտիվացրեց 1998թ. մայիսին ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի այցը Գերմանիա[6], երբ տեղի ունեցավ մեծ արժեք ներկայացնող Հայաստանում պահպանված 575 ձեռագրերի[7], այնուհետև՝ 2000թ. 18000 կտոր գրքերի[8] հանձնումը Գերմանիային: Դա հանդիսացավ հայ-գերմանական մշակութային կապերի հաստատման ու զարգացման անժխտելի և ակնառու երաշխիք: Այդ խոշոր իրադարձության վերաբերյալ ծավալուն հաղորդումներ ունեցան գերմանական ARD և ZDF հեռուստածրագրերը, ընդարձակ հոդվածներ տպագրեցին այնպիսի ականավոր ու ազդեցիկ օրաթերթեր, ինչպիսիք են՝ Frankfurter Allgemeine Zeitung, Frankfurter Rundschau, Süddeutsche Zeitung, Die Welt, Der Tagesspiegel, Berliner Morgenpost, Հռենոս-Վեստֆալիայի Reinische Post երկրամասային օրաթերթը (Ա. Մանուչարյան): Մշակութային արժեքների հանձնման արարողությանն արձագանքեց նաև հյուսիսգերմանական երկրամասային և տեղական մամուլը (Mecklenburger Nachrichten, Kieler Nachrichten, Bild Hamburg, Hamburger Abendblatt, Lübecker Nachrichten):

ՀՀ նորընտիր նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ մշակութային արժեքները հանձնվում են նրանց օրինական տերերին, այն էլ անվարձահատույց: ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը նշում է, որ ձեռագրերի Գերմանիային հանձնելու արարողությունը գտնվել է ՀՀ նախագահ պարոն Ռ. Քոչարյանի անձնական հսկողության տակ[9]:

Լյուբեկի քաղաքային գրադարանը ցուցահանդես է կազմակերպել «Հայաստանից վերադարձված... Լյուբեկի հիմնադրման տարիների մշակու-

---

[6] ADK, Nr. 100 Jg. 1998/ Heft 2, s. 14-15.
[7] "Frankfurter Allgemeine Zeitung", 4. Mai 1998.
[8] "Frankfurter Allgemeine Zeitung", 11. August 2000.
[9] "Reinische Post", 6. Mai 1998, ինչպես նաև "Frankfurter Allgemeine Zeitung", 4&5 Mai 1998; "Der Tagesspiegel", Berlin, 5. Mai 1998; "Leipzigen Volkszeitung", 5. Mai. 1998.

թային գանձեր» նշանաբանով: Հանդիսության ընթացքում քննարկվել և համաձայնության են հասել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից տրվելիք 30 հազար գերմանական մարկի օժանդակության հարցում:

Այդ կապակցությամբ մամլո և տեղեկատվական ծառայության 2000թ. օգոստոսի 10-ի հաղորդագրությունում ասվել է, որ «Օգոստոսի 10-ին՝ հինգշաբթի օրը, Բրեմենի նավահանգիստ հասավ Երևանից տեղափոխված 444 արկղ կազմող շուրջ 18.000 կտոր գերմանական ռազմավարային գրականություն: Այդ գրքերը սերում են Բրեմենի պետական և համալսարանական գրադարանական ֆոնդերից (շուրջ 6.000 հատոր), Մագդեբուրգի պետական գրադարանից, Բեռլինի պրուսական պետական գրադարանից, Բեռլինի տեխնիկական համալսարանից և Լայպցիգի համալսարանական գրադարանից: Գրքերի մեծամասնությունը, որը պահվում էր ՀՀ ԳԱԱ գրադարանում շատ բարվոք վիճակում էր: Պատերազմից հետո Կարմիր բանակի ռուսական ռազմավարային հանձնաժողովի նախաձեռնությամբ այդ գրականությունը տեղափոխվել է Մոսկվա, այնտեղից հասել Երևան: Նրանց մեծամասնությունը 19-20-րդ դդ. բնագիտական, հասարակագիտական, մշակույթի և հոգևոր բնագավառներին էին վերաբերում: Կային նաև մեծարժեք ձեռագրեր և երաժշտական նոտագրություններ»:

Հայաստանի Հանրապետության բարի կամքի արտահայտությանն ի պատասխան 1999թ. մարտին Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրում կայացավ ԳԴՀ ԱԳ քաղաքական արխիվում գտնվող Ստամբուլում Գերմանիայի դեսպանատան 1889-1923թթ. արխիվային փաստաթղթերի ու վավերագրությունների մանրալուսապատճենների ժողովածուի հանձնումը ՀՀ ԳԱԱ գրադարանին:

UNESCO-ի Գերմանիայի հանձնաժողովը սահմանել է «1998թ. ամենագեղեցիկ գրքի հրատարակության համար» հատուկ մրցանակ 1999թ. մարտի 26-ին Լայպցիգում տեղի ունեցած ամենամյա գրքի տոնավաճառի շրջանակներում Մրցանակին արժանացավ «Տիգրան Մեծ» հրատարակչությունը «Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանը» գրքի համար[10]:

Մշակութային կյանքի աշխուժացմանը զգալիորեն նպաստել են նաև 1998թ. սեպտեմբերին կայացած Հայաստանի Հանրապետության մշակույթի օրերը «Բոննյան ամառ» միջոցառումների շրջանակներում:

---

[10] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 178, թերթ 47:

2000թ. օգոստոսին Երևանում տեղի ունեցավ համաշխարհային գիտահավաք «Հայաստան-2000» թեմայով[11]:

2000թ. սեպտեմբերի 2-10-ը ԳԴՀ-ի Հալլե և Վիտտենբերգ քաղաքներում գումարվեց «Հայաստան-2000» միջազգային հայագիտական գիտաժողով՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակին[12], նախատեսված ԳԴՀ Սաքսոնիա-Անհալտ երկրամասի և Հայաստանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդական հարցերի ու սպորտի, Կրթության ու գիտության նախարարությունների միջև գիտամշակութային համագործակցության մասին 1998թ ստորագրված համատեղ հուշագրով: Գիտաժողովի կազմակերպիչն էր հիմնականում Հալլե-Վիտտենբերգի Մարտին-Լյութերի անվան համալսարանին կից գործող «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը:

Միջոցառումն իրագործվել է Սաքսոնիա-Անհալտ երկրամասի Մշակույթի նախարարության և ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության համագործակցությամբ, ինչպես նաև Գերմանիայի ՅՈՒՆԵՍԿՈ-յի հանձնաժողովի մասնակցությամբ: Հովանավորներն էին ԳԴՀ դաշնային նախագահ Յոհհանես Ռաուն, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն: Միջոցառումներին մասնակցում էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական ներկայացուցիչ ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, ինչպես նաև քաղաքական գործիչներ, գիտնականներ և այլ հյուրեր:

Միջոցառման նախօրեին Հալլեի Մորիցբուրգ ամրոց-թանգարանում բացվել է «Կիլիկիայի հայերի փրկած գանձը» ցուցահանդեսը: Գանձեր, որոնք Սսի կաթողիկոսարանից Մեծ Եղեռնի ժամանակ փրկվել և տեղափոխվել են Լիբանան և պահվում են Անթիլիասի թանգարանում: Այն առաջին անգամն էր ցուցադրվում Եվրոպայում:

Գիտաժողովը սեպտեմբերի 4-ի պլենար նիստով սկսեց իր աշխատանքը: Այն սեպտեմբերի 6-ին շարունակվեց Վիտտենբերգում: Ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին հանդիպումներ կազմակերպվեցին, ներկայացնելով բազմաթիվ զեկուցումներ: Անցկացվող հրապարակային բանավեճ-քննարկումներն արծարծում էին արդիական թեմաներ:

«Հայաստանը Եվրոպայում» թեմայով պլենար քննարկում կազմակերպեց ՅՈՒՆԵՍԿՈ-յի Գերմանիայի հանձնախումբը, որտեղ զեկուցումով հանդես եկան այդ հանձնախմբի նախագահ Կ. Հյուֆները, Գերմանական

---

[11] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 17, թերթ 60-61:
[12] ADK, Nr. 109 Jg. 2000/ Heft 3, s. 26-27.

Բունթեսթագի գերմանա-կովկասյան խմբի նախագահ Ք. Լյորխերը, Ներդրումների և Զարգացման Գերմանական Ընկերության (DEG) ներկայացուցիչ Ֆ. Շվայսֆուրտը: Զեկուցումներից հետո կայացավ ակտիվ քննարկում դեսպան Ա. Ոսկանյանի ղեկավարությամբ:

«Կիլիկիո հայերի փրկած գանձը» ցուցահանդեսը և «Հայաստան 2000» միջազգային գիտաժողովը լայնորեն լուսաբանել են գերմանական մամուլը և հեռուստատեսությունը:

Առիթից օգտվելով սեպտեմբերի 4-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն և Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական ներկայացուցիչ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը այցելեցին և օրհնեցին Հալլեի հայ համայնքի նորաբաց «Հայ Տունը», որը միաժամանակ Սաքսոնիա-Անհալտում բնակվող շուրջ 350 հայ երեխաների համար որպես շաբաթօրյա դպրոց է ծառայում:

Շատ հետաքրքիր և ուշագրավ էր EXPO-2000 համաշխարհային ցուցահանդեսը, որն անցկացվեց 2000թ. մայիս-հոկտեմբերին ԳԴՀ-ի Հանովեր քաղաքում[13]: «Մարդ, բնություն, տեխնոլոգիա» թեմայով միջազգային ցուցահանդեսին մասնակցեցին աշխարհի ավելի քան 180 երկրներ և միջազգային կազմակերպություններ: Այդ ցուցահանդեսին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց նաև Հայաստանի Հանրապետությունը, ներկայացնելով մշակույթի շատ արժեքավոր նմուշներ, որոնք արժանացան հաճախորդների սնեռուն ուշադրության:

2000թ. սեպտեմբերի 12-14-ը Քյոլնում տեղի ունեցան «Հայաստանի մշակութային օրեր» խորագրի ներքո անցկացվելիք հայկական թեմատիկային նվիրված մի շարք միջոցառումներ, որոնց կազմակերպիչներն էին Քյոլնում գործող «Լև Կոպելև ֆորումը» և գերմանացի արվեստագետուհի Էլվիրա Ռայթը: Վերջինս մասնակցել է 1998թ. Գյումրիի առաջին Բիեննալեի կազմակերպական աշխատանքներին:

Միջոցառմանը ցանկացան խանգարել Ադրբեջանի ներկայացուցիչները, սակայն դա չհաջողվեց կազմակերպիչների ջանքերի շնորհիվ: Նրանք չմասնակցեցին եռօրյա ֆորումին: Ադրբեջանական կողմին ասվեց, որ մյուս տարի միջոցառում է իրականացվելու նվիրված ադրբեջանական խնդիրներին[14]:

2001թ. նոյեմբերի 19-23-ը Երևանում կայացավ մշակութային համագործակցության հարցերով հայ-գերմանական համատեղ հանձնաժողովի հերթական երկրորդ նիստը: Նրա արդյունքում ստորագրվեց արձանագրություն, որով նախանշվեց մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում համագործակցության սերտացմանն ու աշխուժացմանն ուղղված լուսավոր հեռանկար մոտ ապագայում:

---

[13] ADK, Nr 108 Jg. 2000/ Heft 2, s. 15-17.

[14] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 17, թերթ 68-69:

Խրախուսելի է նաև այն, որ 2003թ. ընթացքում Գերմանիայի մի շարք մշակութային հաստատություններում անցկացվեցին հետաքրքիր նպատակային միջոցառումներ, այդ թվում համերգներ[15], որոնցից մեկն ամբողջովին նվիրված էր Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին: 2004թ. սեպտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 14-ը ԳԴՀ-ի Սաքսոնիա-Անհալտ երկրամասում անց են կացվել Հայաստանի Հանրապետության մշակութային օրեր:

Փաստերը վկայում են, որ Գերմանիայում հայկական մշակույթի օրերի անցկացումը շարունակական բնույթ ունի: Նմանօրինակ միջոցառումների անցկացումը նաև Հայաստանում կարևոր հանգամանք է երկկողմ փոխհարաբերությունների խորացման գործընթացում:

Հայ-գերմանական մշակութային փոխհարաբերությունների վերելքն ապահովեց գերմանահայ համայնքը: Համայնքում ընդգրկված ակնառու գիտնականները, քաղաքական և մշակույթի ներկայացուցիչները երկու երկրների ժողովուրդների ավանդույթներին համապատասխան լայնամասշտաբ գործունեություն են ծավալում այդ բնագավառի բարգավաճման ուղղությամբ:

Գերմանահայ համայնքը վերջին տասնամյակում ձևավորվել է շնորհիվ Մերձավոր և Միջին Արևելքից հայերի ներգաղթի: Անցյալ դարի 60-ական թվականների սկզբին Գերմանիայում 2000-3000 հայ էր ապրում: Արդեն 1975թ. սկսված Շտուտգարդում, Համբուրգում, Բեռլինում, Մյունխենում, Մայնի Ֆրանկֆուրտում, Քյոլնում առկա էին մի շարք հայկական մշակութային ընկերություններ: 80-ական թթ. նրանցից բացի նման ընկերություններ են ստեղծվել նաև Բիլեֆելդում, Բրեմենում, Բոննում, Նյուրնբերգում, Դուիսբուրգում, որին նպաստել է Գերմանիայում հայ բնակչության աճը: Այդ ժամանակաընթացքում հայերի թիվը հասնում էր մոտ 25-30 հազարի, նրանցից շատերը համախմբված են հայ առաքելական եկեղեցու շուրջը:

Գերմանիայում գործում են 11 եկեղեցական համայնքներ և 30 հասարակական կազմակերպություն և միություն:

Անդրադառնանք հայ առաքելական եկեղեցու գերմանական թեմին: Այն ստեղծվել է 1991թ. Քյոլնում, որտեղ գտնվում է նաև Տեր Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանի առաջնորդությամբ գործող Գերմանահայոց առաջնորդարանը: Զմոռանանք նաև Գերմանիայում գործող բողոքականների փոքրաթիվ համայնքի մասին, որին առաջնորդում է պատվելի Հակոբ Ջամբազյանը (Վեցլար): Այն հայտնի է իր բարեգործությամբ թե Հայաստանում, և թե Արցախում[16]:

Գերմանիայում առկա են և գործում են մի շարք քաղաքական կուսակցություններ, կրոնական, մշակութային, մարզային, բարեսիրական կազմակեր-

---

[15] ADK, Nr. 119/120 Jg. 2003/ Heft 1& 2, s. 43-44.

[16] «Հայաստանի Հանրապետություն», 17 նոյեմբերի 2004թ.:

պություններ և հաստատություններ: Նրանց նկատմամբ յուրահատուկ հովանոցի դեր է կատարում Գերմանիայի Կենտրոնական Խորհուրդը:

Գերմանիայում չկան գործող ավանդական հայկական կուսակցություններ, դրանց փոխարեն ակտիվ գործունեություն են ծավալում ամենատարբեր կազմակերպություններ և միություններ, որոնցում ընդգրկված են նաև շատ կուսակցականներ, այդ թվում ՀՅԴ-ից: Այդ կազմակերպությունների և միությունների թվում են Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Հայկական հարցերի հաստատությունը, ՀՕՄ-ի (Հայ Օգնության Միություն) Գերմանիայի մասնաճյուղը և մյուսներ: Գերմանիայում չկան հայկական դպրոցներ, դրանց փոխարեն կազմակերպված գործում են կիրակնօրյա դասընթացներ, որոնք եկեղեցական համայնքների և մշակութային միությունների ջանքերի արդյունք են:

Գերմանիայում 1999թ. օգոստոս-սեպտեմբերին տեղի ունեցած Առաջին Համահայկական խաղերից հետո ստեղծվեց Գերմանիայի Հայկական մարզական հանձնաժողովը, Գերմանահայոց կենտրոնական խորհրդի և գերմանահայ գործարարների միության ջանքերով:

Գերմանիայում գործում են մի շարք գիտական և գիտահետազոտական կենտրոններ: Նրանց շարքում են Մյունխենի Հայկական հարցերի հաստատությունը, Բոխումի Ռուր համալսարանին կից Ստփուռքի և Ցեղասպանության հարցերի հետազոտության ինստիտուտը, Հալլե-Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «Լոյկորեա» հիմնադրամին կից «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը, Բեռլինի հայկական Տեղեկատվական և փաստագրային կենտրոնը, Ասխենի հայկական ճարտարապետական հետազոտական կենտրոնը և այն:

Հիշատակենք «Գերմանա-հայկական ընկերության» նպատակասլաց և արդյունավետ գործունեությունը: Այդ ընկերությանն անդամակցում են հիմնականում գերմանացի գիտնականներ, հասարակագետներ, իրավաբաններ, քաղաքագետներ: Հենց այդ ընկերության նախաձեռնությամբ մի շարք քաղաքներում կազմակերպվել և կազմակերպվում են Հարավկովկասյան տարածաշրջանին, այդ թվում նաև Հայաստանին առնչվող համաժողովներ, քննարկումներ, կլոր սեղաններ, լսումներ, որոնց մասնակցում և բանախոսում են գերմանական քաղաքական, տնտեսական և հասարակական շրջանակների, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ: Ներկայումս հրատարակվում է «Հայ-գերմանական թղթակցություն» (ADK) պարբերականը, գերմանա-հայկական ընկերության հովանավորությամբ: Այդ ամսագրից բացի Գերմանիայում լույս են տեսնում նաև «Գարուն» և «Բարև» ամսագրերը:

2005թ. ապրիլի 8-ին տեղի ունեցավ ԳԴՀ-ի տրանսպորտի, շինարարության և բնակարանաշինության հարցերի նախարարության խորհրդական,

պետքարտուղար, Իրիս Գլայկեի և Հայաստանում ԳԴՀ դեսպան Հայկե Ռենատա Փայչի հանդիպումն Աժ «Հայաստան-Գերմանիա» պատգամավորական բարեկամության խմբի անդամների հետ[17]:

2005թ. սեպտեմբերի 3-ին Երևանում ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունում ստորագրվել է ՀՀ կառավարության և Գերմանիայի Սաքսոնիա-Անհալտ երկրամասի միջև գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին համատեղ հայտարարությունը: Նույն 2005թ. սեպտեմբերի 2-7-ը Հայաստանում կայացան Սաքսոնիա-Անհալտ երկրամասի մշակույթի օրերը:

Գերմանական Հալլե քաղաքում կազմակերպված ամենամյա փառատոնի գեղարվեստական ղեկավար պարոն Բուխհոլցը հայտնեց, որ վերջին տարիներին ակտիվորեն համագործակցում են հայ երաժիշտների հետ[18]:

Դեռևս 2000թ. ապրիլին Գերմանիայի Հանովեր քաղաքում տեղի ունեցավ հայ ուսանողների համաժողով, որին մասնակցում էր 80 մարդ[19]:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պարբերաբար անց են կացվում մշակութային բնագավառի ամենատարբեր բնույթի միջոցառումներ: Դա հատկապես նշանակալից է բուհական և դպրոցական կրթության ոլորտում, որը առանձնապես առնչվում է գիտնականների, ուսուցիչների, ուսանողների և աշակերտների փոխանակումների հետ: Գոհացնող է ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) գործունեությունը: Վերջինիս տրամադրած կրթաթոշակներով հարյուրավոր հայ ուսանողներ են սովորում գերմանական համալսարաններում:

Առկա է արդյունավետ համագործակցություն բարձրագույն կրթության բնագավառում երկու երկրների առանձին բուհերի միջև: Նշանակալից գիտական գործնական ու պրակտիկ համագործակցություն է իրականացվում հատկապես հումանիտար գիտությունների ասպարեզում: Դրա վառ օրինակն է համագործակցությունը Հալլե-Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի գերմանիստիկայի ինստիտուտի և Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գերմանիստիկայի ամբիոնի միջև:

2006թ. նոյեմբերի 22-ին հրատարակվել է համագործակցության ծրագիր՝ հայ-գերմանական կրթամշակութային կապերի ակտիվացման մասին: Նախատեսվում էր 2007թ. ՀՀ-ի և ԳԴՀ-ի կրթամշակութային կապերի ակտիվացման նպատակով Երևանում ստորագրել համագործակցության ծրագիր: Այդ կապակցությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ Կրթության և

---

[17] «Հայաստանի Հանրապետություն», 9 ապրիլի 2005թ.:
[18] «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի 2005թ.:
[19] «Հայկական ժամանակ», 20 ապրիլի 2000թ.:

գիտության նախարարության պատվիրակության Գերմանիա կատարած պատասխան այցի ժամանակ, որը տեղի է ունեցել նոյեմբերի 12-15-ը:

2007թ. մայիսի 12-ին ՀՀ խորհրդարանական ընտրություններից հետո Գերմանիայի արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար Պամելա Պրոյշեն հայտարարել է, որ Գերմանիան շեշտը դնում է ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցության խորացման վրա: Նա միաժամանակ նշեց, որ Եվրամիությունում նախագահող Գերմանիան ակտիվորեն աջակցում է Հայաստանին՝ ինտեգրվելու եվրոպական կառույցներին:

2007թ. հոկտեմբերի 12-22-ը Հայաստան էին այցելել ԳԴՀ Սաքսոնիա-Անհալտ երկրամասի չորս դպրոցների 16 աշակերտներ իրենց ուսուցիչներով, հոկտեմբերի 14-22-ը խմբի հետ էին նաև գերմանական երկու դպրոցների տնօրենները, Մշակույթի նախարարության միջազգային համագործակցության և Եվրոպայի հետ կապերի պատասխանատու պարոն Ուվե Բիրկհոլցն իր տիկնոջ հետ: Հայաստանի և Սաքսոնիա-Անհալտի միջև կնքված համաձայնագրով համագործակցում են 4 հայկական և 4 գերմանական դպրոցները:

Հայաստանից հյուրընկալող էին Երևանի թիվ 5, 6, 88 և Աշտարակի թիվ 4 դպրոցները: Հայկական դպրոցների տնօրեններին և ՀՀ ԿԳ նախարարի գլխավորած պատվիրակությանը Գերմանիայում ընդունեցին ԳԴՀ Սաքսոնիա-Անհալտ երկրամասում:

Գերմանացի ուսուցիչները և դպրոցների տնօրենները պարոն Ուվե Բիրկհոլցի հետ եղան համագործակցվող դպրոցներում, հոկտեմբերի 19-ին Կարապետի անվան թիվ 6 դպրոցում «բարեկամություն» խորհրդանշական միջոցառում կազմակերպվեց:

ԽՍՀՄ-ի փլուզումից և ԳԴՀ-ի վերամիավորումից հետո ազատ և անկախ Հայաստանը դուրս եկավ միջազգային ասպարեզ, ճանաչվեց բազմաթիվ երկրների կողմից, որով հնարավոր դարձավ դիվանագիտական, առևտրատնտեսական, ինչպես նաև կրթական և մշակութային ոլորտներում կապեր հաստատել շատ երկրների, այդ թվում նաև ԳԴՀ-ի հետ:

Հայաստանի և Գերմանիայի կրթամշակութային փոխհարաբերությունները սկսեցին գործել պետական մակարդակով, որին նպաստեցին երկկողմ համաձայնագիրը: